

եւ յետոյ Գրիգոր Պատրիարքի դէմ հակառակեցան միեւնոյն զէնքերով: Ասոնցմէ Բալուցի Մանուէլ քահանայի մասին բաւական գրած է Չամչեան (Գ. էջ 867—871, 875, 876). ինչպէս նաեւ Գրիգոր Պատրիարք Պասմաճեան իր Յիշատակարանին մէջ (էջ 238 «Բալուցի Մանուէլ երէց եւ Ակնցի Աբրահամ», վերջինս «Պատրիարքարանի Գափու Օղջանի»:) Միւսներու մասին յիշատակութիւն չկայ. միայն Յօհաննէս Սափրիչ ունի ինքնակենսագրութիւն մը, զոր ուրիշներ չեն յիշատակեր եւ որմէ կ'իմանանք թէ ինքը Ագուլեցի է եւ տիրացու, իմանկութենէ կաթողիկեայ, եւ Յակոբ Նալեան զինք երեք անգամ թիարան նետել տուած է հաւատքին համար, որմէ ետ կեցած է յետոյ: 1755ին Կ.Պոլիս, Բարսղի տպարանին մէջ տպուած է «Գիրք որ կոչի Լուծիչ տարակուսանաց», գործ Յովհաննէս Սափրիչի (զոր Հ. Ասատուր, անդ էջ 149, սխալմամբ Մանուէլ Սրմաքէշի կուտայ, որ շարագրող կամ խմբագրողն է, ինչպէս նաեւ Մանուէլի «Գաւազան կրկնազօր»ը 1750ին տպագրուած կը դնէ, մինչդեռ այն գրութեան տարին է, եւ տպագրուած է 1780ին): Այս «Լուծիչ» գրքին մէջ (էջ 5) կը կարդանք. «Բան առ բարեմիտ ընթերցողսդ, ի յօհաննիսէ սափրիչէ... գոլով իմ ամաց իւրեւ եօթանց եւ կամ ութից, անկեալ էի ի ձեռս նորաբոյս թնթրկեցւոց այսինքն ակտարմայից, եւ նոքա ուսուցեալ էին ինձ զաղանդն իւրեանց: Եւ յորժամ եղէ ամաց իրրեւ քսանից՝ սկսեալ իմ